ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ


ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Վարոս Արայի Խաչատրյան

ՀԱՍՑԵ Անի թ. 11 փ. 7ա շենք բն. 2

ՀԵՌ. 077-82-15-42


ԴԻՄՈՒՄ

Ես՝ Վարոս Արայի Խաչատրյանս հանդիսանալով Արա Վարդգեսի Խաչատրյանի որդի, խնդրում եմ վերադարձնել հոր անունով 01VA045 պետ. համարանիշներով մեքենայի գույքահարկը։ Կից ներկայացնում եմ փաստաթղթերը։

30 05 2025 թ.

Օր ամիս տարի

Դիմող՝ ____________ (ստորագրություն)

Վարոս Խաչատրյան (անուն, ազգանուն)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ» ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 30.05 20 25 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 7036

ՀՀ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
## ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Ուշադրություն,** սույն տեղեկանքը նախատեսված է միայն փոխադրամիջոցի օտարումն իրականացնելու համար և չի կարող օգտագործվել փոխադրամիջոցի տեխնիկական զննության կտրոնի ձեռքբերման նպատակով:

Տրվում է առ այն, որ

| Մարզ | Համայնք | Բնակավայր | Փողոց | Շենք | Բնակարան |
|---|---|---|---|---|---|
| ՇԻՐԱԿ | ԳՅՈՒՄՐԻ | ԳՅՈՒՄՐԻ | ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. | 7Ա | 2 |

հասցեում հաշվառված և սեփականության իրավունքով

| Հարկ վճարողի անուն, ազգանուն եւ հայրանուն | Բաժնեմաս (կոտորակով) | Անձը հաստատող փաստաթղթի սերիա եւ համար | ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքի համար |
|---|---|---|---|
| ԱՐԱ ՎԱՐԴԳԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ | 1 | | 3705750119 |

պատկանող

| Հաշվառման համարանիշ | Մակնիշ և տիպար | Նույնականացման համար (VIN) | Հզորություն ձ.ուժ |
|---|---|---|---|
| 01VA045 | MERCEDES-BENZ C 280 | WDBHA29G2WA617767 | 197 |

| Թողարկման տարեթիվ | Գրանցման ամսաթիվ | Հաշվառման (վերահաշվառման) ամսաթիվ | Օտարման (խոտանման) ամսաթիվ | Տեսակը |
|---|---|---|---|---|
| 1998 | 25-10-2023 | 25-10-2023 | - | մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենա |

փոխադրամիջոցի գույքահարկի գծով հարկային պարտավորությունները **31-05-2025** թվականի դրությամբ կազմում են

| Տարի | Գերավճար | Ապառք | Տույժ | Ենթակա է վճարման |
|---|---|---|---|---|
| 2023 | 0 | 0 | 0 | 0 |
| 2024 | 0 | 53050 | 6586 | 59636 |
| 2025 | 0 | 22105 | 0 | 22105 |
| Ընդամենը | 0 | 75155 | 6586 | 81741 |

**Ուշադրություն,** տեղական հարկի պարտավորությունների վճարման ժամանակ, անհրաժեշտ է վճարման նպատակ դաշտում նշել սույն տեղեկանքի վրա նշված վճարման ծածկագիրը:

| | |
|---|---|
| Վճարման ծածկագիրը | PSEB4E76B9 |
| Վճարման հաշվի համարը | 900215301582 |

Սույն տեղեկանքը չի կարող օգտագործվել տրանսպորտային միջոցի տեխնիկական զննություն իրականացնելու նպատակով: Այն իրականացվում է բացառապես էլեկտրոնային համակարգի միջոցով տրանսպորտային միջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման հանգամանքի ստուգման հիման վրա:

Տեղեկանքը տրամադրվել է 30-05-2025 թվականին:

Առաջատար մասնագետ — ՍԻԴԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Պատասխանատու անձ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ


№ 944-95/15 « 26 » մայիսի 2025թ.

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամաս Տ. Ճարտարապետ փողոց 16Ա շենքի, 9 բնակարանի բնակիչ Վարդգես Վարոսի Խաչատրյանին առ այն, որ 2024 թվականի հունիսի 6-ին ժ.22:05-ին քաղաքացի Մխիթարյանը ահազանգել է ՀՀ ՆԳՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ ՃԿԿ 911 հեռախոսահամարին և հայտնել, որ Շիրակ-Ջաջուռ ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ, ավտոմեքենան դուրս է եկել երթևեկելի գոտուց և գլորվել ձորը. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Պարզվել է, որ Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհի 10-րդ կմ-ին «Mercedes C» մակնիշի 01VA045 հ/հ ավտոմեքենան (վարորդ Արա Խաչատրյան, ծնվ.1975թ.), դեռևս չբացահայտված հանգամանքներում, դուրս է եկել երթևեկելի գոտուց, մոտ 10մ գլորվելով հայտնվել դաշտամիջյան հատվածում և բռնկվել:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը՝ վարորդը և ուղևոր Նորիկ Գևորգյանը (ծնվ.1996թ.) հոսպիտալացվել են «Գյումրի» ԲԿ: Արա Խաչատրյանը հոսպիտալացման ճանապարհին մահացել է:

Ժ.22:07-ին տեղեկատվությունը փոխանցվել է ոստիկանության մարզային ՕԿԿ ՕՀ ոստ. կապիտան Խաչատրյանին:

Ժ.22:07-ին՝ «1-03» ծառայության հերթապահ Ռաֆայելյանին:

Հրդեհը մեկուսացվել է ժ.22:30-ին, մարվել՝ ժ.22:34-ին:

Հրդեհի հետևանքով «Mercedes C» մակնիշի 01VA045 հ/հ ավտոմեքենան այրվել է ամբողջությամբ:

Հիմք՝ Վարդգես Խաչատրյանի 26.05.2025թ. դիմումը:

Տրվում է ներկայացնելու Գյումրու համայնքապետարան:

***Պետի, ՊԺԿ փ/ծ փոխգնդապետ*** ***Արսեն Ադամյան***


*Կատարող՝ ՆԳՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ*
*ՃԿԿ պետ Էդվարդ Սարոյան*
*հեռ. (060)-71-25-87*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

3104, ք.Գյումրի, Հաղթանակի պողոտա 6

Հեռ. 5-06-00,
Ֆաքս 5-77-71

64/ 4-146 կր. 24
« 13 » 03 2025թ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝

**Ա.Ս.ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Իսահակյան,

Ուղարկում եմ թիվ 30108024 քրեական վարույթը կարճելու մասին որոշումը հաստատված վիճակում:

Առդիր՝ որոշումը «12» թերթ,

Հարգանքով՝

Շիրակի մարզի դատախազ,
արդարադատության երրորդ
դասի պետական խորհրդական՝

**Ա.Դ.ՉԻՉՈՅԱՆ**

21.03.25թ.

Թիվ 30108024 քրեական վարույթը կարճելու մասին որոշումը

<<Հաստատում եմ >>
Շիրակի մարզի դատախազության դատախազ, առաջին դասի խորհրդական՝

Թ.Ա.Հարությունյան

<<17>> 02 2025թ

# Ո Ր Ո Շ Ու Մ

թիվ 30108024 քրեական վարույթը կարճելու մասին

**«29» հունվարի 2025 թ.** **ք. Գյումրի**

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Լ. Ֆ. Պապոյանս քննարկելով վարույթումս քննվող թիվ 30108024 քրեական վարույթի նյութերը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2024 թվականի հունիսի 7-ին ՀՀ ՔԿ Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնում ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզի Ախուրյանի բաժից ստացվել է «Գյումրի ԲԿ» ՓԲԸ-ի հաղորդումը և կազմված փաստաթղթերը, որ 2024 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 21:45-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Անի թաղամասի 11-րդ փողոցի 7ա շենքի 2-րդ բնակարանի բնակիչ՝ 27.05.1975թ ծնված՝ Արա Վարդգեսի Խաչատրյանը վարելով «Մերսեդես» մակնիշի 01 VA 045 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհի 6-րդ կիլոմետրի հատվածում, ՇՄ Ախուրյան համայնքի Ջաջուռ բնակավայրի վարչական տարածքում, կորցնելով մեքենայի կառավորում դուրս է եկել ճանապարհի երթևեկելի ուղեմասից, կողաշրջվել և այրվել, որի հետևանքով վարորդ՝ Արա Խաչատրյանը մահացել է, իսկ ուղևոր, 27.05.1996թ ծնված՝ Նորիկ Արմենի Գևորգյանն, ով ծառայում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի 1-ին վաշտի 3-րդ դասակում որպես պարեկ, մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Գյումրի» ԲԿ ՓԲԸ:

Մեկնել է մեկ մարտական հաշվարակ Ախուրյանի ՀՓՋ-ից, հրդեհը նույն օրը՝ ժամը 22:34-ին մարվել է:

Դեպքի առթիվ 2024 թվականի հունիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է թիվ 30108024 քրեական վարույթը, կատարվել է նախաքննություն:

Դեպքի վայրի զննության ընթացքում պարզվել է, որ ՇՄ Ախուրյան համայնքի Ջաջուռ
ծակավայրի վարչական շրջանով անցնող Գյումրի-Վանաձոր ճանապարհի 6-րդ կիլոմետրից
սկսած ճանապարհի ձախ կողմի երկաթյա և բետոնյա արգելապատնեշները 18 մետր
բացակայել են, իսկ 3 մետր երկարությամբ երկաթյա արգելապատնեշները պոկված և
ճանապարհի եզրին է ընկած եղել: Մոտ 15 մերտր խորությամբ ցորենի արտերի մեջ դիմացի
հատվածով դեպի Վանաձոր քաղաքի ուղղությամբ, կողաշրջված և այրված ավտոմեքենա է
առկա, որից 5 մետր հեռավորությամբ գազի անվնաս բալոն է, իսկ կողքին այրված և թույլ
տեսանելի '' 01 VA 045'' գրառումով հաշվառման համարանիշը:

Որոշում է կայացվել Արա Վարդգեսի Խաչատրյանին տուժող ճանաչելու մասին:

Արա Խաչատրյանի որդին Վարոս Արայի Խաչատրյանը դիմում է ներկայացրել, խնդրել
իրեն ճանաչել մահացած տուժողի փոխարեն տուժող:

Որոշում է կայացվել Վարոս Արայի Խաչատրյանին մահացած տուժողի փոխարեն տուժող
ճանաչելու մասին:

Վարոս Խաչատրյանը ցուցմունք է տվել, որ հայրը Գյումրու սպորտդպրոցում
թեքվանդո սպորտաձևի մարզիչ է աշխատել, 1993 թվականի Արցախյան պատերազմի
ժամանակ վիրավորվել և աջ ձեռքը դաստակից ամպուտացվել է, ուստի անժամակետ երկրոդ
կարգի հաշմանդամություն է ստացել: Հայրը չի ունեցել վարորդական իրավունիք վկայական
և մեքենա չի էլ վարել: <<Մարսեդես Բենց>> մակնիշի 01 VA 045 h/h ավտոմեքենան
սեփականության իրավունքով պատկանել է հորը, սակայն միայն ինքն է շահագործել այն,
ունեի ''B'' կարգի վարորդական իրավունքի վկայական: Հայրը սովորություն չի ունեցել իրեն
կամ մորը պատմել նախատեսվող գործերից, ինքը տեղյակ չի եղել, որ հայրը պատրաստվել է
<<Մարսեդես Բենց>> մակնիշի 01 VA 045 h/h ավտոմեքենան անձամբ վարելով մեկնել Սևան
քաղաք: 2024 թվականի հունիսի 6-ին առավոտյան աշխատանքի է գնացել ոտքով, մեքենան
և բանալիները գտնվել են տանը, օրվա ընթացքում հոր հետ բջջային հեռախոսազրույցից
տեղեկացել է, որ նա Նորիկի հետ գնացել էր Սևան քաղաք: Վերջինը հոր սանն է, երկար
տարիներ հոր մոտ է պարպատել: Հայրն իրեն ասել է, որ անձամբ է վարել ավտոմեքենան,
չնայած վարորդական իրավունքի վկայական չի ունեցել: Ժամը 23:00-ի սահմաններում
զանգահարել հորը, սակայն հեռախոսազանգին ոչ ոք չի պատասխանել, հետո
ոստիկաններից տեղեկացել է, որ հայրը վթարի է ենթարկվել և նրան տեղափոխել են
<<Գյումրի ԲԿ>>, իսկ հիվանդանոցում իմացել է հոր մահվան մասին: <<Մարսեդես Բենց>>
մակնիշի 01 VA 045 h/h ավտոմեքենան լիովին շահագործման ենթակա է եղել,
համապատասխան լուսավորությամբ, արգելակման համակարգով և ոչ մի խնդիր չի եղել:
Հեռախոսազրույցի ընթացքում վիճաբանության ձայներ չի լսել, կասկածներ չունի, որ
կատարվածը դժբախտ դեպք է եղել: Հայրը եղել է հանգիստ, ոգելից խմիչք ընդհանրապես
չի օգտագործել, շատ ջերմ հարաբերությունների մեջ է գտնվել Նորիկ Գևորգյանի հետ:
Վստահ է, որ պատահարը հոր մեղավորության արդյունքում է եղել, քանի որ նա չունենալով
վարորդական իրավունքի վկայական շահագործել է ավտոմեքենան:

Վարոս Խաչատրյանը ցուցմունքով և վարույթն իրականցնող մարմնին հասցեագրված
դիմումով չի առարկել ոչ արդարացման հիմքով հոր մահվան փաստով քրեական վարույթը
կարճվելու վերաբերյալ, քանի որ Նորիկ Գևորգյանը ծանր մարմնական վնասվածք ստացե
հոր կողմից ճանապարհատրանսպորտային կանոնները խախտելու հետևանքով, իսկ հայր

մահացել է: Ինքը հոր մահից հետո հաշտվել և փոխադարձ համաձայնության է եկել Նորիկ Գևորգյանի հետ, ինքնուրույն կամաարտահայտությամբ և ազատ կամքով, ընդունել է հոր մեղավորությունը, չի առարկել, որ հետմահու հոր նկատմամբ ոչ արդարցման հիմքով քրեական հետապնդում չհարուցելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշում կայացվի:

Որպես վկա հարցաքննվելիս Նորիկ Արմենի Գևորգյանն, ում պարզաբանվել է նաև մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները, ցուցմունք է տվել, որ ինքը գտնվել է մեքենայի մեջ որպես ուղևոր, նստած է եղել վարորդի կողքին, մեքենան վարել է Արա Խաչատրյանը: Սևան քաղաքից, վերադարձել են հարքարոջ որդու Մերուժան Սահակյանի և Արա Խաչատրյանի հետ, որտեղ իր համար ավտոմեքենա են գնել: Գյումրից մինչև Սևան քաղաք մեքենան վարել է Արան, Սևան քաղաքում հանդիպել են մեքենան վաճառող անձի հետ, գնացել ոստիկանության հաշվառման քննական բաժանմունք, ավտոմեքենան հաշվառել իր անունով և վերադարձել Գյումրի քաղաք: Գնած <<Մերսեդես>> մակնիշի ավտոմեքենան վարել է Մերուժանը, իսկ ինքը գտնվել է Արայի ավտոմեքենայի մեջ: Սևան քաղաքում միասին հաց են կերել, որի ընթացքում ոչ-ոք ալկոհոլ չի օգտագործել, որից հետո ժամը 19:00-ի սահմաններում Սևան քաղաքից շարժվել են Գյումրի քաղաք: Մերուժանը <<Մերսեդես>> մակնիշի մեքենան վարել է իրենց առջևից, Արան նույն 60-70կմ/ժ արագությամբ ընթացել է իր ուղեմասով մոտակա լույսերով՝ անհրաժեշտության դեպքում նաև հեռահար լույսերով: Տեղյակ չի եղել, որ Արա Խաչատրյանը վարորդական իրավունքի վկայական չի ունեցել: Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի տարածքում անսպասելի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի հերթևեկելի գոտուց, գլորվել դաշտերի մեջ, ինչի հետևանքով ստացել է վնասվածքներ և տեղափոխվել հիվանդանոց: Որքան հիշել է անձամբ դուրս եկել վթարված մեքենայից, չի տեսել, թե Արային ով է հանել մեքենայից, քանի որ գիտակցության կորուստ է ունեցել և մանրամասները չի հիշել:

Որոշում է կայացվել Նորիկ Արմենի Գևորգյանին տուժող ճանաչելու մասին:

Տուժողի դատավարական կարգավիճակում Նորիկ Արմենի Գևորգյանը նույնաբովանդակ ցուցմունք է տվել, որ Արա Խաչատրյանի հետ ջերմ հարաբերություններ է ունեցել: 2024 թվականի հունիսի 6-ին Արա Խաչատրյանի հետ նրա ավտոմեքենայով մեկնել են Սևան քաղաք, որտեղ գնել է <<Մերսեդես>> մակնիշի ավտոմեքենա: Սևան քաղաքում հաց են կերել, սակայն ոգելից խմիչք չեն օգտագործել: Գյումրի քաղաք վերադառնալուց նոր գնած ավտոմեքենան վարել է Մերուժանը, ով ընթացել Արա Խաչատրյանի մեքենայի առջևից: Ինքը նստած է եղել Արայի մեքենայի դիմացի նստատեղին և զբաղվել բջջային հեռախոսով: Մեքենան ընթացել է թույլատրելի արագությամբ, իրենց երթևեկելի գոտում, իսկ Շիրակի մարզի Ջաջուռ բնակավայրի շրջադարձերին անսպասելի մեքենան ընկել է ձորը: Ինքը գիտակցության է եղել, դուրս եկել շուռ եկած մեքենայից միջից, և իրեն տեղափոխել են հիվանդանոց, քանի որ ոտքը կոտրված է եղել: Գիտակցության կորուստ է ունեցել և դեպքի մանրամասներն այդ թվում մեքենայի այրվելը և Արա Խաչատրյանի դիակն այնտեղից դուրս բերելը չի տեսել, բայց հասկացել է, որ Արան մահացել է, քանի որ իր հարցրին չի պատասխանել:

Վկա Մերուժան Արթուրի Սահակյանը ցուցմունք է տվել, որ 2024 թականի հունիսի 5-ին երեկոյան իրեն զանգահարել է մորեղբոր որդին՝ Նորիկը, խնդրել ավտոմեքենա գնելու նպատակով որպես արհեստավորիր հետ գնալ Սևան քաղաք: Հաջորդ օրը՝ ժամը 11-ի

սահմաններում, Շիրակի մարզի Մայիսյան գյուղից Նորիկի հետ եկել են Գյումրի քաղաք: Իր ավտոմեքենան կայանել <<Բեռլին>> պոլիկլինիկայի բակում, և Արա Խաչատրյանի <<Մերսեդես>> մակնիշի մեքենայով երեքով ուղևորվել են Սևան քաղաք: Նորիկը երկու տարի առաջ իրեն ծանոթացրել Արա Խաչատրյանի հետ, ներկայացրել որպես իր մարզիչ և դիմել <<Ընկեր Արա>> անունով, որից հետո այլևս չի հանդիպել նրան: Սևան քաղաք ուղևորվելու ճանապարհին Արան հանգիստ վարել է ավտոմեքենան, ոչ մի խնդիր չի եղել, նույնիսկ ունեցած հաշմանդամությունը որևէ կերպ չի խոչընդոտել ավտոմեքենայի կառավարմանը: Արան իր մոտ շատ օրինապահ վարորդի տպավորություն է թողել, նույնիսկ իրեն թույլ չի տվել ավտոմեքենայի մեջ ծխել: Սևան քաղաքում Արային առաջարկել է, որ մնացած ճանապահին վարել մեքենան, սակայն Արան մերժել է: Ոստիկանությունն իրենց չի կանգնեցրել, քանի որ խախտումներ թույլ չի տվել: Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ բնակավայրի սննդի կենտրում կանգնել են, հաց կերել, որի ժամանակ ոչ- ոք ալկոհոլ չի օգտագործել, հետո ուղևորվել են Սևան քաղաք: Թերակղզու մոտ հանդիպել են ավտոմեքենան վաճառող տղամարդուն, ում անձնական տվյալները չգիտի, քանի որ խոսակցությունը վարել է Նորիկը: Համաձայնության են եկել, առուվաճառք կատարելու համար, գնացել ոստիկանության <<ՄՌԵՕ>> կոչվող բաժանմունք, գործարքն ավարտելուց հետո, ժամը 18:00-ի սահմաններում դուրս են եկել Սևան քաղաքից և ուղևորվել Գյումրի քաղաք: Նոր գնած <<Մերսեդեսը>> մակնիշի ավտոմեքենան ինքն է վարել, իսկ Արան և Նորիկը եղել են մյուս ավտոմեքենայով, եկել իր հետևից: Արան ամբողջ ճանապարհին հանգիստ վարել է ավտոմեքենան, վազանցներ չի կատարել, Դիլիջանի ոլորանների մոտ կանգնել են ապակիները մաքրել և շարունակել ընթացքը: Երբ հասել են Շիրակի մարզի Ջաջուռ գյուղով անցնող գնացքի գծերի մոտ, ինքը հասկանալով, որ համարյա հասել են, հանգիստ եկել է Գյումրի քաղաք, չի հետևել հայելու մեջ հետևից ընթացող Արայի ավտոմեքենային: Կանգնել է Գյումրին քաղաքի մուտքի մոտ՝ <<Կիլիկիա>> ռեստորանի դիմաց, սպասել Արայի մեքենային: Մի քանի մեքենաներ անցել են, որից հետո հակառակ ուղղությամբ արագ ընթացել է շտապօգնության մեքենա, ինչից անհանգստացել և հետ է վերադարձել: Ջաջուռ գյուղի դաշտերում կրակ է տեսել, իսկ ճանապարհին՝ շտապօգնության մեքենա: Մոտենալով տեսել է գետնին ամբողջովին վնասվածքներով Արայի մարմինը, նա իր հարցերին չի պատասխանել, իսկ վերջինից 10-15 մերտ հեռավորությամբ Նորիկ Գևորգյանին, ով ևս գիտակցության չի եղել: Նրանց կողքին կանգնած են եղել ռուս տղամարդիկ, ովքեր իրեն ասել են, որ այրվող մեքենան մինչ պատահարն իրենց մեքենայի առջևից է գնացել, շրջադարձին կորցրել է կառավարումն աջուձախ ճոճվել, ապա հարվածելով բետոնե պատնեշներին, ընկել է դաշտի մեջ: Իրենք հասցրել են մեքենայից դուրս բերել վարորդին և ուղևորին: Անծանոթ տղամարդիկ եղել են <<Օպել Զաֆիրա>> մակնիշի ավտոմեքենայով, որի համարանիշները և նրանց բջջային հեռախոսները չի հարցրել, քանի որ շփոթված և հուզված վիճակում է եղել: Տեղյակ չի եղել, որ Արա Խաչատրյանը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական չի ունեցել, այդ մասին իմացել է քրեական վարույթի շրջանակներում, վստահ է նաև, որ Նորիկը ևս չի իմացել, այլապես նրա հետ Սևան քաղաք չէր գնա:

Սթափության զննության է ենթարկվել Նորիկ Արմենի Գևորգյանը և 07.06.2024թ.-ին՝ ժամը 01.52-ի դրությամբ, վերջինի մոտ ալկոհոլի պարունակությունը եղել է 0,000մ/գլ:

Դիակի զննությամբ պարզվել է, որ Արա Վարդգեսի Խաչատրյանի դիակի վրա տեսանելի հատվածներում առկա են բազմաթիվ վնասվածքներ, այրված կամ հրկիզման հետքեր չեն հայտնաբերվել: Պարզվել է նաև, որ Ա. Խաչատրյանի աջ դաստակն ամպուտացված է եղել:

Որոշումներ են կայացվել Նորիկ Արմենի Գևորգյանի և Արա Վարդգեսի Խաչատրյանի հագուստներն առգրավելու վերաբերյալ:

Ա. Խաչատրյանի հագուստները առգրավվել են, որոնց զննությամբ պարզվել է, որ դրանք վնասված և արնանման հետքերով են, սակայն այրված կամ հրկիզման հետքեր չեն հայտնաբերվել:

Արա Վարդգեսի Խաչատրյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ ստացվել է թիվ 0101 եզրակացությունը, համաձայն որի՝ Ա.Վ.Խաչատրյանի մահը պայմանավորված է գլխուղեղի դիֆուզ տրավմատիկ ախտահարումով, որը գանգուղեղային բութ բաց վնասվածքի հետևանք է: Ներկա հետևություններով հաստատվել է փորձաքննությամբ հայտնաբերված հետևյալ տրավմատիկ փոփոխություններով-ձախից ճակատային շրջանի սալջարդ վերք և քերծվածք, գլխի փափուկ հյուսվածքների տակ արյունազեղումներ, նրբենու, ուղեղանյութի փորոքների արյունազեղումներ, գանգաթաղի և հիմի ոսկրերի կոտրվածք, որոնք կենդանի անձանց մոտ դասվում են առողջությանը ծանր վնաս առաջացնող վնասվածքների շարքին և որոնք էլ հանդիսացել են մահվան պատճառ:

Բացի այդ փորձաքննությամբ հայտնաբերվել են նաև, երկկողմանի կողոսկրերի բազմաթիվ (ուղղակի) կոտրվածքներ, երկկողմանի հեմոթորաքս, ձախից՝ կրծքավանդակի՝ առաջային մակերեսի քերծվածքներ, աջ զստափոսի շրջանի արյունազեղում է և քերծվածք, կրծքավանդակի հետին մակերեսի, ձախ գոտկային և նստատեղի շրջանների քերծվածքներ, աջ և ձախ վերին վերջույթների շրջանների բազմաթիվ քերծվածքներ, որոնք կենդանի անձանց մոտ դասվում են առողջությանը ծանր վնաս առաջացնող վնասվածքների շարքին և մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ  չեն գտնվում: Բոլոր վերը նշված վնասվածքները հասցվել են կենդանության օրոք, մահից կարճ ժամանակ առաջ բութ առարկաներով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում, հանգամանքներում: Ա. Վ. Խաչատրյանի դիակի փորձաքննությամբ այլ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Ա.Վ. Խաչատրյանի դիակի փորձաքննությամբ հիվանդություններ, որոնցով տառապեր վերջինս մինչ մահը և որոնք հանդիսանային մահվան պատճառ չեն հայտնաբերվել: Ելնելով դիակային երևույթներից Ա.Վ.Խաչատրյանի մահը վրա է հասել դիահերձումից մոտ 16-20 ժամ առաջ:

Արա Վարդգեսի  Խաչատրյանի դիակից վերցրած արյան, մեզի դատաքիմիական ուսումնասիրության արդյունքում  արյան մեջ էթիլ սպիրտ չի հայտնաբերվել: Արա Վարդգեսի Խաչատրյանի դիակից վերցված արյան, մեզի դատաքիմիական ուսումնասիրության արդյունքում թմրանյութերի շարքի ալկալոիդների ռեակցիաները եղել են բացասական: Արա Վարդգեսի Խաչատրյանի դիակից վերցրած այրան դատաքիմիական ուսումնասիրության արդյունքում հոգեմետ նյութեր չեն հայտնաբերվել: Արա Վարդգեսի Խաչատրյանի այրունը պատկանում է A խմբին/2-րդ խումբ/:

Դատաբժշկական փորձաքննությամբ փորձագետի թիվ 0176/Հ եզրակացության համաձայն՝ Նորիկ Արմենի Գևորգյանի ստացած մարմնական վնասվածքներն ըստ

բժշկական փաստաթղթերի տվյալների՝ աջ ազդրոսկրի միջտմբիոնային փակ բեկորային տեղաշարժով կոտրվածքի, աջ բազկի և գլխի սալջարդ վերքերի ձևով, հասցվել են բութ առարկաների ներգործության հետևանքով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում հանգամանքներում, առնվազն մեկ ներգործության արդյունք են, որոնք առաջացրել են առողջության ծանր վնաս, նկատի ունենալով աշխատունակության ոչ պակաս, քան 1/3-ի կորուստ:

Դատաավտոտեխնիկական փորձաքննությամբ փորձագետի թիվ 23962408 եզրակացության համաձայն՝ առաջադրված տվյալների ուսումնասիրությունից հետևել է, որ «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 /h ավտոմոբիլի երթևեկելի մասից դուրս գալու պատճառ է հանդիսացել դեպքի վայրի ճանապարհահատվածում դրա վարորդի կողմից ավտոմոբիլի ընթացքի ոչ պատշաճ և վտանգավոր կառավարման իրականացումը, այսինքն՝ «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 h/h ավտոմոբիլի վարորդը, նախապես հաշվի չի առել առկա ճանապարհային պայմանները, ընտրել է երթևեկության այնպիսի ռեժիմ՝ ավտոմոբիլի ընթացքի այնպիսի արագություն, որի արդյունքում կորցրել է ավտոմոբիլի պատշաճ կառավարումը և դուրս եկել ճանապարհի երթևեկելի մասից: Նման գործողություններով «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 h/h ավտոմոբիլի վարորդը, տեխնիկական տեսակետից, ստեղծել է վթարային իրադրություն՝ թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ, 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի հետևյալ պահանջներին հակասող գործողություններ՝

ՃԵԿ-ի 65-րդ կետ. «Վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ՝ հաշվի առնելով երթևեկության ինտենսիվությունն ու տրանսպորտային միջոցի և բեռի վիճակն ու առանձնահատկությունները, ճանապարհային և օդերևութաբանական պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակն ու տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ»,

ՃԵԿ-ի 66-րդ կետ. «Վարորդը պետք է ընտրի այնպիսի արագություն, որը հնա րավորություն է տալիս նրան կանոնների պահանջներին համապատասխան ապահովելու տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումը»,

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մաս. «Ճանապարհային երթևեկության մասնակիցը պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ճանապարհային երթևեկության կանոնները... ու իր գործողություններով չստեղծել վթարային իրադրություն»:

Այսինքն՝ առաջադրված պայմաններում «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 h/h ավտոմոբիլի վարորդը, երթևեկության անվտանգությունն ապահովելու և տվյալ պատահարի առաջացումը բացառելու նպատակով, պետք է հաշվի առնելով առկա ճանապարհային պայմանները, ընտրեր երթևեկության այնպիսի ռեժիմ՝ ավտոմոբիլի ընթացքի այնպիսի արագություն, որի դեպքում նա հնարավորություն կունենար տվյալ ճանապարհային պայմաններում իրականացնել ավտոմոբիլի լիարժեք կառավարումը և կապահովեր դրա ընթացքի կայունությունը: Մինչդեռ առաջադրված պայմաններում «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 h/h ավտոմոբիլի վարորդը, չընտրելով համապատասխան երթևեկության ռեժիմ՝ ավտոմոբիլի ընթացքի արագություն, որը նրան հնարավորություն կտար ապահովել ավտոմոբիլի ընթացքի լիարժեք կառավարումը, ինչի

արդյունքում ավտոմոբիլը դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն՝ թույլ տվել ՃԵԿ-ի 65-րդ, 66-րդ կետերի ու «Ճանապարհային երթևե կության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի վերոհիշյալ պահանջներին հակասող գործողություններ:

Այսպիսով, ամփոփելով կատարված վերլուծության արդյունքները, եզրակացվել է, որ առաջադրված պայմաններում «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հ/հ ավտոմոբիլի վարորդը, նախապես չընտրելով համապատասխան երթևեկության ռեժիմ՝ երթևեկության այնպիսի արագություն, որը նրան կտար ավտոմոբիլի ընթացքը լիարժեք կառավարելու հնարավորություն, ինչի արդյունքում ավտոմոբիլը դառնալով անկառավարելի դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից, թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ, 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, տեխնիկական տեսակետից ստեղծել վթարային իրադրություն՝ պայմանավորել տվյալ պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից:

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1, 2 և 3. Առաջադրված պայմաններում «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հ/հ ավտոմոբիլի վարորդը, նախապես չընտրելով համապատասխան երթևեկության ռեժիմ՝ երթևեկության այնպիսի արագություն, որը նրան կտար ավտոմոբիլի ընթացքը լիարժեք կառավարելու հնարավորություն, ինչի արդյունքում ավտոմոբիլը դառնալով անկառավարելի դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից, թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ, 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, տեխնիկական տեսակետից ստեղծել վթարային իրադրություն՝ պայմանավորել տվյալ պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից:

4. և 5. Հարցերի պարզաբանումը դուրս է ավտոտեխնիկական փորձագետի իրավասություններից:

Տուժող Նորիկ Գևորգյանը վարույթն իրականցնող մարմնին հասցեագրված դիմումով չի առարկել, որ ոչ արդարացման հիմքով Արա Խաչատրյանի կողմից ճանապարհատրանսպորտային կանոնները խախտելու արդյունքում առաջացած վթարի հետևանքով վերջինի նկատմամբ հետմահու ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդում չհարուցվի և քրեական վարույթը կարճվի: Վթարի արդյունքում ծանր մարմնական վնասվածք ստացելու փաստով Ա.Խաչատրյանի և նրա փոխարեն տուժող ճանաչված՝ Վարոս Խաչատրյանի դեմ բողոք-պահանջ չի ներկայացրել, քանի որ հաշտվել և փոխադարձ համաձայնության են եկել, չի առարկել, որ քրեական վարույթը կարճվի:

Արա Վարդգեսի Խաչատրյանը ՀՀ ՆԳՆ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ռեգիստրի տվյալներում առկա տեղեկատվության համաձայն վարորդական իրավունքի վկայական չի ստացել:

Ա.Խաչատրյանին ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ 1291422 որոշման համաձայն անժամկետ երկրորդ կարգի հաշմանդամություն է տրվել:

Հանձնարարություն է տրվել հետաքննության մարմնին օպերատիվ հետախուզական միջոցառումներ անցկացնելու ավտոմեքենայից Արա Խաչատրյանի դին դուրս բերած անձանց ինքնությունը պարզելու նպատակով:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության Ախուրյանի բաժնից ստացված գրության համաձայն 2024 թվականի հունիսի 6-ին «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հ/հ ավտոմոբիլի վարորդը՝ Արա Վարդգեսի Խաչատրյանը չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական շահագործել է այն, Գյումրի քաղաքից ուղևորվել Սևան քաղաք և հետ վերադարձել նույն ուղղությամբ: Երթևեկության ընթացքում Ա.Խաչատրյանը Գյումրի-Վանաձոր ճանապարհի 6-րդ կիլոմետրին՝ ՇՄ Ջաջուռ գյուղի վարչական տարածքում, դուրս է եկել երթևեկելի գոտուց, գերազանցելով արագությունը բախվել բետոնե արգելապատնեշներին և ընկեր դաշտերի մեջ, ինչի հետևանքով վարորդը տեղում մահացել է, իսկ ուղևոր Նորիկ Գևորգյանը ստացել ծանր մարմնական վնասվածքներ: Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հ/հ ավտոմեքենայի վթարի ենթարկվելուց հետո, նույն մեքենայի հետևից ընթացող ազգությամբ ռուս տղամարդիկ մեքենայի միջից դուրս են բերել Ա.Խաչատրյանի դին և Նորիկ Գևորգյանին, որից հետո մեքենան այրվել է: Ձեռնարկված միջոցառումներով Նորիկ Գևորգյանին և Ա.Խաչատրյանի դին վթարված ավտոմեքենայից դուրս բերած անձանց ինքնությունը և <<Օպել Զաֆիրա>> մեքենայի տվյալները հնարավոր չի եղել պարզել, տրված ցուցմունքներն արժանահավատ են, տարածքում տեսանկարահանող սարքավորումներ չեն հայտնաբերվել:

---

Վարոս Խաչատրյանը ներկայացրել է <<Roadpolice.am>> կայքով հաշվառված «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի շահագործման ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ ստացած ծանուցումները: Համաձայն ներկայացված ծանուցումների 2024 թվականի հունիսի 6-ին հիշյալ ավտոմեքենայի մասնակցությամբ ՃԵԿ-ի կանոնները խախտելու վերաբերյալ արձանգրություններ և վարչական տույժեր չեն հայտնաբերվել:

Որոշում է կայացվել «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հաշվառման համարնիշների ավտոմեքենայի մնացորդները և Արա Խաչատրյանի վնասված բջջային հեռախոսը ճանաչել իրեղեն ապացույց:

**ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդված սահմանում է՝**

**<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը՝**

1. Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն.

<<1. Քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝

1) անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը...,

10) անձը մահացել է...

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն

3. Սույն հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված հանգամանքի առկայությունը քրեական հետապնդումը բացառող չէ, եթե մահացածի օրինական ներկայացուցիչն առարկում է դրա դեմ այն հիմքով, որ մահացածը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը: Այս դեպքում քրեական վարույթը շարունակվում է ընդհանուր կարգով, սակայն մեղադրական վերդիկտ կայացնելու դեպքում այդ անձի նկատմամբ պատիժ չի նշանակվում: Սույն հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը չի տարածվում քաղաքացիական դատավարության կարգով անձին մահացած ճանաչելու դեպքերի վրա...:

Այսպիսով՝ նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքներով հիմնավորվել է, որ 2024 թվականի հունիսի 6-ին Սևան քաղաքից վերադառնալով Գյումրի քաղաք «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վարորդ՝ Արա Վարդգեսի Խաչատրյանը չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, վարել է հիշյալ տրանսպորտային միջոցը, Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհին, որի ընթացքում նախապես չի ընտրել համապատասխան երթևեկության ռեժիմ՝ երթևեկության այնպիսի արագություն, որը իրեն կտար ավտոմոբիլի ընթացքը լիարժեք կառավարելու հնարավորություն, ինչի արդյունքում ավտոմոբիլը դառնալով անկառավարելի դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից, այսինքն, թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ, 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, տեխնիկական տեսակետից ստեղծել վթարային իրադրություն՝ պայմանավորել տվյալ պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, ինչը հետևանքով ավտոմեքենան բախվել է երկաթյա արգելապատնեշներին գլորվել շուրջ 15 մետր բարձրությունից հարակից արտերի մեջ, շրջվել, ապա նաև այրվել: Պատահարի հետևանքով վարորդ Արա Վարդգեսի Խաչատրյանը գլխուղեղի դիֆուզ տրավմատիկ ախտահարման, գանգուղեղային բութ բաց վնասվածքի հետևանքով ստացած վնասվածքներից տեղում մահացել է, իսկ մեքենայում գտնվող ուղևոր՝ Նորիկ Գևորգյանը ստացել է աջ ազդրոսկորի միջտմբիոնային փակ բեկորային տեղաշարժով կոտրվածքի, աջ բազկի և գլխի սալջարդ վերքերի ձևով առողջության ծանր վնաս պարունակող աշխատունակության ոչ պակաս, քան 1/3-ի կորուստով վնասվածքներ: Ավտոմեքենայի սրահից անցորդ մեքենայում գտնվող և նախաքննության ընթացքում չպարզված ռուս տղամարդկանց օգնությամբ Արա Խաչատրյանին և Նորիկ Գևորգյանին դուրս են բերել շրջված ավտոմեքենայի սրահից, որից հետո ավտոմեքենան վառելիքի արտահոսքի հետևանքով բռնված հրդեհից այրվել է:

Այսինքն, հիմնավորվել է, որ «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդ՝ Արա Վարդգեսի Խաչատրյանը, խախտելով վերը նշված ՃԵԿ-ի կանոնները և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման

**...ասին»** ՀՀ օրենքի պահանջները դուրս է եկել երթևեկելի գոտուց և վթարի ենթարկվել, ինչի ...տևանքով մահացել է, իսկ ուղևոր՝ Նորիկ Գևորգյանը ստացել է ծանր վնաս պարունակող աշխատունակության ոչ պակաս, քան 1/3-ի կորուստով վնասվածքներ: Այսինքն հիմնվորվել է, որ Արա Խաչատրյանի մահվան մեջ որևէ մեկը մեղավոր չէ, որևէ մեկի գործողությունների արդյունքում այն տեղի չի ունեցել, հետևանբար որևէ որևէ մեկին, այդ թվում նաև Նորիկ Գրևորգյանին չի կարող մեղսագրվել ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարում, քանի որ վերջինը ձեռք բերված ապացույցների համաձայն չի վարել ավտոմեքենան, չի կատարել իրեն մեղսագրվող սույն հոդվածով նախատեսված հանցանքը, ուստի Նորիկ Գևորգյանի նկատմամբ չի կարող հանրային քրեական հետապնդում հարուցվել իրեն մեղսագրվող արարքը կատարած չլինելու հիմքով:

Նկատի ունենալով վերոգրյալը և հաշվի առնելով, որ Արա Վարդգեսի Խաչատրյանը կենդանության օրոք կատարել է ՀՀ քրեական օրենսգի 342-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջին ծանրության հանցանք, սակայն տուժող՝ Նորիկ Գևորգյանը մահացած տուժող՝ Արա Խաչատրյանի դեմ բողոք-պահանջ չի ներկայացրել, վերջինի որդու, մահացած տուժողի փոխարեն տուժող ճանաչված՝ Վարոս Արայի Խաչատրյանի հետ խնդիրներ չունի, խնդրել է վթարի արդյունքում իր առողջությանը ծանր վնաս պատճառելու վերաբերյալ քրեական հետապնդում չհարուցել և քրեական վարույթը կարճել:

Վարոս Խաչատրյանը դիմումով ընդունել է վթարի հարցում հոր մեղավորությունը, չի առարկել, որ հոր նկատմամբ ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդում չհարուցվի և քրեական վարույթը կարճվի, հետևաբար նախաքննությամբ հիմնավորվել, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջը՝ այն է անձը մահացել է, ուստի հիմք ընդունելով վերոգրյալը Արա Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չի կարող հարուցվել:

---

**ՀՀ քրեական օրենսգրի 342-րդ հոդված սահմնում է՝**

**<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը՝**

1. Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով...>>:

Հաշվի առնելով վերոգրյալը 2024 թվականին դեկտեմբերի 9-ին միջնորդություն է ներկայացել թիվ 30108024 քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին Արա Վարդգեսի Խաչատրյանի նկատմամբ

է սույն հոդվածի 6-րդ մասում նշված անձանց՝ նրանց գրավոր պարզաբանելով որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները: Բողոքը մերժելու դեպքում վերադաս դատախազն իր որոշմամբ հաստատում է վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ նշելով դրա դատական բողոքարկման կարգը և ժամկետները: Բողոքը մերժելու վերաբերյալ որոշումը վերադաս դատախազն անհապաղ ուղարկում է բողոք բերած անձին:

3. Իրեղեն ապացույց ճանաչված Ն. Գևորգյանի և Ա.Խաչատրյանի հագուստները, այրված «MERCEDES-BENZ C 280» մակնիշի 01 VA 045 հաշվառման համարանիշների ավտոմեքենայի մնացորդները և Ա.Խաչատրյանի վնասված բջջային հեռախոսը վերադարձնել Վարոս Խաչատրյանին և Նորիկ Գևորգյանին:

**Վարչության քննիչ՝** **Լիզա Դապոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
СЛЕДСТВЕННЫЙ КОМИТЕТ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
INVESTIGATIVE COMMITTEE of the REPUBLIC of ARMENIA
211






shamshyan.com